

Քաթեի տիտղոսի մը, սոսկ ընծայելու համար մեզի վ. Քէքէեանի և Ռ. Որբերեանի զոյգ ջերթուածներն ու հաս մ'ալ արձակ գրութիւն:

ՀԱՅԿԱԿԱՆ բաժինը նախ արդի Հայ Եկեղեցականութեան ընդհանուր ցանկն է որ կու տայ: Բանասիրական լուրջ յօդուած մը Բարզէն Եպս. է՝ կը ներկայացընէ պատմական տուեալներով «Հասարակին Աշխարհ»։ Աջին կամ Աջերու ծագման կարգ մը պատմական տեղեկութիւններու ամփոփ ու շահեկան դասաւորումն է ան, անոր լուսանկարներով զարդարուած (էջ 489-501): Յովակիմ Ք. Բարսեղեան Հայ ժողովուրդը շահագրգռող ծանօթութիւններ կու տայ «Հնդկա-Չափանայ եկեղեցիներ»ու մասին. Ինչքան ցաւալի է կարդալ, որ 450-ի հասնող այդ ամբողջ հայ գաղութին մէջ 100էն աւելի անձինք օտարունիներու հետ ամուսնացած են. հայերէն գիտողներն ալ ամօթ կը համարին եղբր անով խօսիլ...: Մեր Տարեցուցագրեր անտեղեկ չպահելու համար իր ընթերցողը Հայաստանի վերջին միամիայ գործունէութեան՝ կը ներկայացնէ Լեոն Թիւթունեանէ ընդարձակ տեղեկութիւն մը մեր Երկրին քաղաքական, շինարարական, տնտեսական ու կրօնական կեանքին նկատմամբ (510-538): Ուշագրաւ է նախկին շրջաններու պատկանող Հայաստանի Ռատիկաններու կարևոր ցուցակը, զոր կու տայ Կ. Յ. Բասմաշեան: Դուրեան պատերիարքէ վերջ, որ ունի «Ակնարկ մը Հին Հայ Կարգապահներու գոյութեան վրայ», կայ «Մարդագրէր Հայոց մէջ» տիտղոսով համատու տեսութիւն մը. նոյնպէս արժէքաւոր է Գուրգէն Տէր Վարդանեանի «Մարդագրն» ուսումնասիրութիւնը:

Վերջընթեր բաժինն է ՅՊԱՌԻՆՔԱՅԸ, որ նախ յառաջ կը բերէ «Միփրարեան տիտղոսը», ու միասնի թուելէ վերջ անցեալ տարւոյ թագմ.ին մէջ ամփոփած մեր փաստերը՝ կը սրբազրէ իր Տիպուտատին ծոցը պահուած արձագանգը, որ Վիեննական Հարց Յոռարեանէն հասեր էր. այսպէս կը փակէ իր խօսքը, թէ Միփրարեան

տիտղոսի գործածութեան անդրանկութեան իրաւունքը Ս. Ղազարու Հարց կը պատկանի: Յետոյ բուսական թուով ազգային մասննագիրներ, եկեղեցական և աշխարհական գործիչներ լիով ունին սեղմ ծանօթութիւններ իրենց կենսագրութեան ու գործունէութեան շուրջ:

«Ամենոս Տարեցոյցը» կը փակուի ՄԱՀԱԳՐԱԿԱՆ բաժինով մը:

Մենք հոս մի միայն գլխաւորներն յիշեցինք. կարելի է մի աք մի թուել պատուական հատորին բոլոր մասերը, որոնցմէ ոչ մէկը զուրկ է շահեկանութենէ:

Ուրեմն կրնանք ըսիլ. «Թէոդիկ իր անծերանալի առուզութեամբ խլեց այս տարի ալ իր փայլուն յաղթանակը՝ Տարեցոյցներու աշխարհին մէջ:

Հ. Ղ. ՏԱՅԱՆ

ՀԱՆԴԷՍ ՀԱՆԴԻՍԻՑ

ԱՐԱԳԱՇ

«Գրական, գեղարուեստական կիսամեայ» մը, հաւատարիմ իր նկարագրին և խոստման՝ կը բռնրէ անդամիկ բեղուն տարի մը: Փարիզահայ պարբերականներու զուե՛ր՝ ազգային լաւագոյն թերթերուն հետ կը մրցի. զրագէտներու պատկանելի խումբ մ'է. որ հետաքրքրական յօդուածներ կը հայթայթէ, որոնք ամէնքն ալ ախորժով և ոչ առանց օգտի կը կարդացուին. և այս՝ մեծագոյն խրախոյսն է հրատարակիչներուն, և լաւագոյն փաստը՝ թէ Արագած իր առաջադիր նպատակին կը հասնի:

Լաւագոյն յօդուածներ և ըստի գործակիցներ իր շուրջն հաւաքել անշուշտ գործունեայ և ուղղամիտ խմբագիր մը կը մտնանայ. և Պ. Յ. Պօղոսեան զուրկ չէ այդ կրկին ձիւղբիցն. որով և Արագածի յօդուածագիրները յարանանք վիճակի մէջ են, ինչպէս իր նիւթերը միշտ թարմ են և բաւական ընտիր. բացի Ս. Պօղոսեանի մէկ ծիծաղելի յօդուածէն «Քրիստոսի Հնդկաստան ճամբորդութիւնը» և ուրիշ մէկ երկու հատ:

Յ. Պօղոսեան լուրջ խմբագրականներու շարք մ'ունի հոն. ան կը շօշափէ ազգային ընկերաւական տեսակէտներ գրականութեան հետ առընչուելու ունեցող, ինչպէս « Հայ գրականութեան ներկան », « Մեր ուղղութեան շուրջ », « Անկեղծ դիտողութիւններ », « Արտասահմանը », « Մեր հարուստները » և նման նիւթեր. ասոնցմէ զատ ունի քանի մը զուտ գրական ու քերթողական էջեր, ինչպէս « Քերթողին հոգին », « Անպատասխան » « Զորակին տունը » ևն :

Վ. Մալեզեան « Նոր Պար և Ճգա-Պանոս » ու՛մ հին ու նոր պարի ոգին կը վերլուծէ. երբեմնի գեղեցիկէր, սէրը, ներդաշնակ երգը որ այժմ' սղեղորոքեան, խոշ տափանքի և խժժաձայնութեան կը փոխուի, և հեղինակին կուտ պատգամով « Մարմինը անգամ մ'ալ կը զգենտէ հոգին » : Նոյն բարոյական շունչն ունին իր մի քանի քերթուածները, « Միջնադրին », « Ռ'էրին » . վերջինիս բովանդակութիւնը վերլուծուած է անցեալի մը՝ որուն այլասերուած է ներկան :

Հետաքրքրական յօդուածաշարք մ'ունի Կ. Միքայէլեան « Մի Պոյտը Հայաստանում » գաւառական գրութիւններով, ինչպէս « Ելալ-Գառնի » « Արարատեան դաշտում », « Հայաստանի ամառանոցները », « Գիլիշան », ուղեգրութիւն մը որ կը պատկերանայ նահապետական կեանքի հայը իր ներդաշնակ ու հպակեան բարբառով մանաւանդ « Գիրգական հեռախօս » ծածուկաբարձ թատերական էջերում : Հեղինակի աշխոյժ գրիչը միացած անկեղծ և անսեթեմեթ արտայայտութեան՝ որ արևելադասին բնագործնէ է՝ սրտագրուելուն է ընթերցումը :

Հայ երաժշտութեան ու թատրոնին ընտիր բաժիններ ունի « Արագած » . և Օր Բարբաբեան և Ալեանաք անխոնջ ու կշտադատ տեղեկատուներն են անոնց : Առաջինի կարգ մը յօդուածներէն՝ « Վերլուծումներ Կոմիտաս Վ.ի շուրջ » գեղեցիկ և ուշադրութեան արժանի է՝ տարբարտա հայ երաժշտագէտի կեանքէն սրտաշարժ գրուածներ պարունակելով : Իսկ Պ. Ալեանաք՝ նուրբ և աւանշառ դիտողութիւններ ունի փարիզահայ թատրոնի շուրջ : Իր գոսերը հարկատր են կարգ մը յաւակնոսներ յորդորելու՝ « Կրթել զեռ անկիրթ ճաշակը, սովորել արուեստը, և թափանցել անոր . նրբութիւններուն » :

Զօպանեան մեզ կու տայ ընտանի ճով « Հայ գրականութեան » պատկերը հին ու մանաւանդ վերապարտի շրջանին . կը շնտէ հայ գրականութեան անհրաժեշտութիւնը գաղտնի հայտութեան մէջ՝ միշտ անբակ մայր երկրէն . հուսկ

թելադրութիւններ հայ գրականութեան և գրագէտին ձեռնտուութեան մասին են :

Քահրա պէյի աշխարհահռչակ համբաւը հայ հասարակութիւնն հետաքրքրեց իր գարմանագործութիւններով . բոլոր հայ մամուլին մէջ ֆաքիրիզմի լաւագոյն լուսարանութիւնը բժ. Քոջոբեան տուաւ « Արագած » ի էջերում . ընթերցողը գոհ կը թայ խորապէս այդ գրութեանէն : Հարկ չկայ անշուշտ շնտել թուրտոյի « Հաշի Մուրատ » վէպի գեղեցիկագիտական ու հոգեբանական արժանիքի մասին . բաւ է ըսել թէ թուրտոյ է հեղինակը : Վիպական շարք մ'ունի նաև Ս. Զարոյեան . արտօրով կը կարդացուին « Անիկը », « Լյազբալմանա տղան » և « Մակաբոյժ » :

« Արագած » ի բեմին վրայ կը տեսնենք աշխոյժ գրագէտ « Արամ Երեմեանը » որ ամէն կողմ կը հասնի իր կարգ մը նիւթերը սփռելու . իրենց համեստ պարզութեան մէջ իր յօդուածները հոս կը ներկայացնեն Հայաստանի գրականութեան իշխանից՝ « Ստեփան Զօրեան », « Ալագան », « Ա. Կարիբեան » ևն, անոնց կենսագրական գիծերն ու գործերը :

Գրական ու գեղարուեստական էջեր ունին Սեւուհի, Կարինեան, Տէր-Անդրէասեան, Ս. Քէսէնեան, Գալէզ, Միքայէլեան, Նարգուհի, Գարբինեան, Չարբեան, Մ. Տէր Ստեփանեան և երաժշտագէտ Ա. Սպենդիարեան, ինչպէս և Մ. Զերազ « Մուրացկանը » սրտագրու պատմութեան թով :

« Արագած » ի քերթուածներու բաժինի կը մասնակցին՝ Վէտա, Մանտեօսեան, Վ. Մալեզեան, Անայիտ, Աստանիկ, Հ. Նազարեան, Լ. Էսանանեան, ինչպէս նաև ծանօթ « Հալաբի որս » ի հեղինակը . և Յ. Գուրումեան « Արձակ երգեր » ու : Ըսենք օակայն որ յետինս նուազ մաս կուած ճիւղն է հոս :

Ան « Արագած » ի տարեկան պատկերը՝ զոր երազաստր թիւղցով մը ուրուագծեցիք յաւընի ինչպէս կ'երևի . անկեղծօրէն յառաջադեմութիւն կը մաղթենք՝ յարատեւութեան պայմանով :

ՔՐՈՒՄՆԵՐ

Այս թերթին երևումը մեծ պակաս մը կցուց կրնանք ըսել՝ առանց երկարօրէն խօսելու իր դրական մեծ օգուտներուն :

Անցեալ տարուն « Հայ Բժիշկ » և « Հայ բուժակ » նուագեցան, մարեցան . երկուքն ալ ընտիր ու բարոյական թերթեր որոնք կարգ մը

ցոփ, անկարագիր և երբեմն անկրօն թերթե-
րու դարմանն էին՝ հողույ, մարքի և մարմնի:
Պիտի մարթէիքը անոնց՝ Ղազարու բախտակցու-
թիւն մը մտաւալուա:

Իսկ «Քուժակ»-ի մասին շատ զովեստներ ու
թուումներ պիտի լընենք, քանի որ ան մասնա-
ճիւղի թերթ մ'է որով և որոշ իր տեսարանն
ու ստալարէզը. նոյն կենսական դասերը մար-
մնոյ առողջութեան՝ որ էական է նաև հոգւոյն,
մասնականը կարգ մը ախտերու և հիւանդութիւն-
ներու մասին՝ որոնց դեղն ու յորդորը բա-
րոյականի չէնքին հիմն ու պահպանումն է. ինչ-
պէս առակ է «Առողջ միտք յառողջ մարմնի»
նոյնպէս կրնանք յանկուլ թէ «մաքուր մարմնոյ
մէջ միայն կ'ապրի՝ մաքուր հոգի մը» աչքի
առջև ունենալով բարոյական տեսակէտը:

Նիւթերու ընտրութեան զաղափար մ'ունե-
նալու համար կը բաւէ ակնարկել բժշկական
մարմնին՝ որ իր մասնագիտութեան սահման-
ներուն մէջ հմուտ է. Բժ. Լ. Գրիգորեան, Բժ.
Աբէլեան, Բժ. Պ. Քօլօլեան, Բժ. Ե. Մինաս-
եանց, Բժ. Քորգոմեան և օտարներ: Ինչպէս կը
զուրգուրանք մեր անզին առողջութեան՝ նոյնքան
մտադիր ըլլանք անոր պահպանումին, և առ այս
անհրաժեշտ է «Քուժակ»-ի պէս ընտիր առաջ-
նորը մը և խորհրդատու: Քող գիտակից ըլլալ
ամէն հայ երիտասարդ, ամէն հայ ընտանիք թէ
անպայման հարկ մ'է «Քուժակ»-ի ներկայու-
թիւնը իր տան մէջ: Յարգելի խմբագրութեան
և գործակիցներուն յաջողութիւն և յարատևու-
թիւն:

ԴԻՏԱՄԱՆ

Ան պարբերական մը՝ որու մասին ուզելով
անկեղծօրէն խօսիլ՝ պիտի ըսէիք թէ զայն
կազմողները կրնան առանց տատամտելու այ-
սորունը՝ իսկ սկսեալ լաւագոյն նպատակի մը
սահմանել իրենց նիւթական և բարոյական հի-
զերը. այս մեր առաջարկին անշուշտ զարմա-
ցող քիչ, իսկ ձայնակից շատ պիտի ունենանք:
Ինչ է մեր յոռեստութեան շարժառիթը. և ո՞վ
չի գիտեր թէ «Դիտարանը» Ս. Գրիգոր կը խն-
դիթիւրէ. ո՞վ չ'ըմբռներ թէ ան բարեմիտ հայ
ժողովրդեան նախկին ամբիժ հաւատքն է որ կը
խախտէ: Եթէ ակնարկ մը տաս նիւթերուն (ս-
րոնք առանց ծիծաղելու չէ կարելի կարգալ՝ Ի-
րենց մեղկութեան և հենգամտութեան պատճա-
ռաւ) կ'ափշիս երբ ան տեսնու որ քեզ կ'ուզէ
սովբեցնել թէ ո՞վ է Աստուած սրբովհետև հե-

ապիտակով ինք զԱյն նոր գտեր է. կարծես,
և իրաւ իր Աստուածը մերը չէ... Թէ Յիսուս
վեր է, կամ վար է չոր Աստուծմէ, թէ կաթո-
ղիկէ եկեղեցին ճշմարտութիւնները կ'հղճանէ...
Խեղճ դիտարանցիներ... Ինչպիսիք բարեմտու-
թիւն, որուն համար արժանի եղեր են այնպի-
սի տեսիլներու և յայտնութեանց՝ որոնք իմաս-
տուններէն և գիտուններէն ծածկուած են: Կրօնք,
Յիսուս, Ս. Պօղոս՝ նոր կը հասկցուին մեր դի-
տարանցիներուն նրբատես դիտակով... վաղը,
միև օր անշուշտ նոր նոր Գրիգորներ, Աթա-
նասներ, Ոսկեբերաններ ալ պիտի տան աշխարհի
և ճշմարտութեան լոյսը տարածեն բոլոր մարդ-
կութեան... Թող լաւ պատրաստեն ուրեմն ի-
րենց՝ դերը:

ԵՆԱՄԱՆ

Ան պարբերաթերթ մ'ալ համետ և զովելի
դիտումով, որ է ըլլալ «զպրոց» մը հայ ժո-
ղովրդական դասակարգին: Եւ ստուգիւ անոր
խմբագրականները ընտանի դասեր են՝ Ամերի-
կայի Իճզէն հայութեան մէջ արծարծ պահելու
ազգային սէրը: Նոյն նպատակին ուղղուած են
«Արեմտահայ գրականութիւն» արտոյտին տակ
յօդուածները երբորդ բաժին մ'ալ կայ, և այն
ցանցառ ուրուագիծեր դէմքերու՝ միջազգային
մատենագրութենէն. մերթ ազգային կեանքի և
լուրերու արձանագանցներ ալ կ'երկին շուն:

Ծիածանի խմբագրութիւնը մեծ հեզերով կը
շնայ իր թերթի կեանքն ապրեցնել, որու մաճ-
օին արժանի է խորին գիտնաութեան, օտակայն
ներուի մեզ դիտել որ նիւթերու կրկնութիւնը՝
քանի մը բառի փոփոխութեամբ, շատ պատուա-
բեր չէ, ինչպէս անխնամ դասերու աններելի
վրիպակները. այսպէս Ալիշանի «բառ փորո-
տան» էն՝ տուն մը խաթարուած է բալորովին.
յետոյ սխալ տեղեկութիւններ կու տայ հայ հե-
ղինակներու մասին. որոնցմէ քանի մը հասն
յիշեմ. «Զարպանէլեան շ. Գրիգոր պատմա-
բան է» . նախ անունն է Գարեգիմ, և յետոյ
ան միայն մատենագրութեամբ զբաղած է:

«Ն. Վ. Հացունի պատմաբան» . ո՞չ, այլ է
հնախօս և բանասէր:

«Ն. Ա. Ղազիկեան պատմաբան» . երազած
իսկ չէ այդ մասնագիտը նա քաջ հայկաբան
թարգմանիչ և մատենագէտ է են են:

Կը յուսանք ասկէ վերջ աւելի խնամք ու
հշարտութիւն գտնել:

